

րի ցանկութիւններից է բղխում, այդ սէրը կամենում է հանել պոռնիկին ցեխներից և նրան օրինաւոր, պատւաւոր կեանքի սովորեցնել: Բանաստեղծական ձեռվ արտայայտուած այս հայրենասիրութիւնը միթէ նշանակում է «մեր ազգը մարդկութեան մրուրը նկատել»: Երբէք:

Պ. Չօպանեանը հիացած է նահապեա Քուչակի երգերի վրայ և չափազանցութիւնների է զիմում: Այն, գեղեցիկ կտորներ կան այդ երգերի մէջ, Քուչակը այսուհետեւ նոյնակէս սիրելի կը լինի մեզ համար, ինչպէս Սայաթ-Նովան, բայց մենք հեռու ենք Սայաթ-Նովայով էլ, նահապեա Քուչակով էլ այդ աստիճան յափշտակուելուց: Նրանք պարծանք դառնալու չափ խոչոր չեն: Ուրիշ բան է, եթէ մեր անցեալից մնացած լինի վրայ «Ընձենաւորի» նման մի բան: Զը մոռանանք, որ քրդերն անդամ ունեն «Սարէ-Սիփանէ»ի պէս մի բանաստեղծական գոհար...

Լ.

Հ. Ա. Երեմեան. «ՏՈՒՐԿԻՆ». ազգավէպ, պատկերազարդ, 82 էր. գ. 2,50 ֆրանկ (1 լուրի): Վենետիկ, 1903 թ.:

«Տուրկինի» հեղինակը իր մանրավէպի նիւթը վերցրել է հայոց պատմութեան հին շրջանից:

Երուանդ Յ. Թագաւորի պալատականների մէջ կար մի քսու մարդ Տուր անունով: Նա երուանդի սիրելին էր և ամենամտերիմը ամբողջ արքունիքում, բայց նրա բոլոր գաղանիքները հաղորդում էր Արտաշէսի խորհրդատու Մերատ սպարապետին: Երուանդը իմանում է այդ և սպանում է Տուրին: Տուրի կինը, Տուրկինը, վճռում է հանել իր ամուսնու վրէժը: Նա ծպտեալ կերպարանքով հեռանում է իր դղեակից և իմանալով՝ որ իր ամուսնու մահուան պատճառը եղել է Բագարանի զանձագետ քուրմը, հրապարակաւ սուրբ միսում է նրա կուրծքը այն ժամանակ, երբ թագաւորը և ժողովուրդը հանդիսաւոր թափորով Բագարանի կուպերը փոխազրում են Արտաշատ:

Մանրավէպը զրուած է կեզծ կլասիկական ոճով, սակայն տեղաթեղ հեղինակը տալիս է ընթերցողին կինդանի պատկերներ մեր հին անցեալից, օրինակ՝ տկալաստով (տկերի վրայ արքած լաստով) նաւարկութիւնը Արաքսի վրայով, աղքատների խումբը Բագարանի տաճարի առաջ, վհուկի գուշակութիւնը Տուրկինի համար:

Չեփ տեսակէտից վէպիկի թոյլ կողմը խօսակցութիւններն են, բոլորն էլ անբնական, փրոց-ուռոց կամ քաղցր-մեղցր, բա-

ցի աղքատների զրոյցներից, որոնց միջոցով հեղինակը շատ լաւ բնորոշում է Բագարանի քուրմերին, այժմեան քուրմերի նախաթիպարներին:

Ինչ վերաբերում է բովանդակութեանը, մեզ վերին աստիւ ճանի անյաջող է թւում վեպիկի գաղափարը:

Ոխակալութիւնը, արիւնավորէժը ինքն ըստ ինքեան վայրենի և քստմեանի բան է և միմիայն բացառիկ գէպքերում կարող է համարուել թոյլատրելի, և աւելի պարտադիր, մինչեւ անդամնեթէ դատելու լինենք ոչ թէ մի հոգեորականի, այլ նոյնիսկ աշխարհականի տեսակէտից:

Ինչով ուրեմն բացատրել, որ մի հոգեորական, ինչպէս է հ. Ս. Երեմեանը, իր ոգեորութեան առիթ և նիւթ է ընտրել Տուրի պէս մի քսու մարդու մահուան համար կատարուած վըրէժինդրութիւնը:

Մեզ համար այդ անհասկանալի է մնում, ինչպէս անհասկանալի է առհասարակ այդ ամբողջ «ազգավէպի» արիւնարբու տօնը:

«Ներողամիտ, ոչխարամիտ և աննկարագիր թագաւորներուն օրով է, որ Հայաստանի լոյսը խաւարեցաւ», ասում է Տուրկինը:

Միթէ այդ չարիքը կարելի է դարմանել մարդակերական բնագրներ զարթեցնելով և զարգացնելով ընթերցողի մէջ։ Զեմ կարծում։

Համակրելի հերոսը կարող է ստիպուած լինել արիւն թափել, կարող է նոյնիսկ իր սրբազն պարտականութիւնը համարել այդ, բայց նա չէ կարող արիւնաբու լինել։

Մեզ թւում է, հինգ նոյն ազգային անցեալում հ. Երեմեանը կարող էր աւելի լաւ, աւելի համակրելի նիւթ գտնել իր գաղափարը լուսարանելու համար, եթէ նրա գաղափարը գաղափարն է եղել գատափիետել մեր ազգի ինատութիւնը և մեղկութիւնը։

Տ. Յ.

Միւսիւ Մարիկեանց, «ՄԱՐՈՒ ԱԼՔՈՄԸ», բանաստեղծութիւններ, հրատարակութիւն Աւետիս Տէր-Մարգսեանցի, 40 ել. գ. 20 կ. Թիֆլիս, 1903 թ.։

Պ. Մկրտիչ Մարիկեանցը շատ փափկասիրտ բանաստեղծ է, նա չէ կարող տեսնել, թէ ինչպէս «մի զեռուն կարիծ՝ անզօր թերով պտոյտ է դալիս իր լամպարի լոյսի շուրջը», և չը խանդաղատուել, իսկ երբ նա խանդաղատուու է, բնականօրէն վերցնում է զրիչը և բանաստեղծութիւն է զրում։